# ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՃԱԿԱՏՈՒՄ

## ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿՈՆԳՐԵՍԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԸ

**Վիեննա, 18 մարտի (ՏԱՍՍ).—** *Մարտի 17-ի երեկոյան Վիեննայում տեղի ունեցավ խաղաղության պաշտպանության ժողովուրդների կոնգրեսի հանձնաժողովի եզրափակիչ նիստը. Հանձնաժողովին հանձնարարված է կառավարություններին և ժողովուրդներին իրազեկ դարձնել հինգ մեծ տերությունների կառավարություններին կոնգրեսի ուղղած դիմումին և հասնել դրա կենսագործմանը։*

*Հանձնաժողովի անդամներից բացի, նիստին ներկա էին օտարերկրյա հեռագրական գործակալությունների և խոշորագույն թերթերի բազմաթիվ ներկայացուցիչներ։*

*Նիստը բացեց խաղաղության Համաշխարհային խորհրդի նախագահ պրոֆեսոր Ժոլիո-Կյուրին։ Նա ընդգծեց, որ հինգ մեծ տերությունների կառավարություններին խաղաղության պաշտպանության ժողովուրդների կոնգրեսի ուղղած դիմումը ջերմ արձագանք գտավ ամբողջ երկրագնդի ժողովրդական լայն մասսաների մեջ։ Այդ պատճառով, ասաց Ժոլիո-Կյուրին, մենք մեծ պատասխանատվություն ենք կրում խաղաղության ծարավի միլիոնավոր մարդկանց առջև։ Մենք պետք է ամեն ինչ անենք, որպեսզի կենսագործենք հինգ մեծ տերությունների միջև խաղաղության Պակտ կնքելու վերաբերյալ կոնգրեսի դիմումը և դրանով իսկ ապահովենք խաղաղություն աշխարհին։*

*Ապա հանդես եկավ Պյետրո Նեննին։ Նա ընդգծեց, որ խաղաղության պաշտպանության ժողովուրդների կոնգրեսից հետո անցած ժամանակաշրջանում նոր համաշխարհային պատերազմի վտանգը աճել է Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարող շրջանների ագրեսիվ կուրսի ուժեղացման կապակցությամբ։ Այսօր, ասաց Պյետրո Նեննին, ուղղակի անհրաժեշտություն է դարձել նոր ուժով հինգ մեծ տերությունների կառավարություններից պահանջել մտնելու բանակցությունների ուղին և դրանով իսկ վերջ տալու սառը պատերազմին։ Բանակցությունները հնարավորություն կտան խաղաղ կարգավորել գերմանական ու ավստրիական հարցերը, դադարեցնել պատերազմները Կորեայում, Վյետնամում և Մալայայում։*

*Հանձնաժողովի նիստում հանդես եկած՝ սովետական գրող Իլյա Էրենբուրգը նշեց, որ Սովետական կառավարության քաղաքականությունը եղել է և մնում է խաղաղության ու ժողովուրդների բարեկամության քաղաքականությունը։ Սովետական կառավարության ղեկավար ընկեր Մալենկովը, ասաց Իլյա Էրենբուրգը, այս տարվա մարտի 15-ին ՍՍՌՄ Գերագույն Սովետի սեսիայում հայտարարեց. «Ներկայումս չկա այնպիսի վիճելի կամ չլուծված հարց, որը կարելի չլինեը լուծել խաղաղ ճանապարհով՝ շահագրգռված երկրների փոխադարձ պայմանավորվածության հիման վրա։ Դա վերաբերում է մեր հարաբերություններին բոլոր պետությունների հետ, այդ թվում նաև մեր հարաբերություններին Ամերիկայի Միացյալ Նահանգների հետ։ Խաղաղությունը պահպանելու գործում շահագրգռված պետությունները կարող են ինչպես ներկայումս, այնպես էլ ապագայում համոզված լինել Սովետական Միության կայուն խաղաղ քաղաքականության մեջ»։*

*Մենք, ասաց վերջում Իլյա Էրենբուրգը, բարի կամքի բոլոր մարդկանց կոչ ենք անում պաշտպանել ժողովուրդների կոնգրեսի դիմումը։ Դեռ կարելի է կանխել մեծագույն աղետը։ Դեռ կարելի է փրկել միլիոնավոր մարդկանց, որտեղ էլ նրանք ապրելիս լինեն՝ Լոնդոնում թե Փարիզում, Մոսկվայում թե Նյու-Յորքում։ Դեռ կարելի է կուտա-*

րան պաշտպանել ահավոր կործանումից։ Ժողովուրդները պատասխանի կսպասեն, ժողովուրդները կպաշտպանեն խաղաղությունը։

Ապա հանդես եկան Խաղաղության պաշտպանության Ժողովուրդների կոնգրեսի անդամներից՝ պաստոր Ցորբեկկը (Նորվեգիա), պաստոր Էնդիկոտը (Կանադա), Իվ Ֆարժը (Ֆրանսիա) և ուրիշներ։

Վերջում հանձնաժողովը միաձայն ընդունեց կոչ՝ ուղղված հասարակայնությանը։

## ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿՈՆԳՐԵՍԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՉԸ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆԸ

Վիեննա, 18 մարտի (ՏԱՍՍ).— Խաղաղության պաշտպանության ժողովուրդների կոնգրեսի հանձնաժողովը մարտի 17-ի իր նիստում ընդունեց հասարակայնությանն ուղղված հետևյալ կոչը.

Մեզ վրա դրված հանձնարարությանը համապատասխան, մենք 1953 թվականի մարտի 17-ին հինգ մեծ տերությունների կառավարություններին ուղարկեցինք Խաղաղության պաշտպանության ժողովուրդների կոնգրեսի դիմումը։ Մենք նրանց առաջարկեցինք բանակցություններ սկսել Խաղաղության Պակտ կնքելու նպատակով։

1952 թվականի դեկտեմբերին Վիեննայում կայացած կոնգրեսի պահից հետո միջազգային իրադրության մեջ տեղի ունեցած փոփոխությունները է՛լ ավելի են մեծացնում այդ դիմումի նշանակությունը։ Ամենուրեք, ինչպես Եվրոպայում, այնպես էլ Ասիայում, պատերազմի սպառնալիքն է՛լ ավելի է աճել, է՛լ ավելի ակներև դարձել։ Կասկածի տակ դնելով պատերազմի ժամանակ ու պատերազմից հետո կնքված որոշ համաձայնագրեր, դրանով իսկ խրախուսում են ռեանշիստական ուժերին, որոնք ընդունում են ագրեսիա ծնել։ Այդ փոփոխությունների լույսի տակ ժողովուրդները գիտակցում են, որ չի կարելի տարաձայնությունները կարգավորել ուժի կամ ահաբեկման միջոցով, նրանք ավելի ու ավելի հաստատամտորեն են հանդես գալիս այդ մեթոդների դեմ և պահանջում են կանգնել բանակցությունների ուղու վրա, որոնք թույլ կտան հասնել հինգ մեծ տերությունների միջև Խաղաղության Պակտ կնքելուն։

Ժամանակակից բոլոր պրոբլեմները կարող են կարգավորվել այդ բանակցությունների ընթացքում և Խաղաղության Պակտ կնքելու շնորհիվ։

Այդ Պակտը Միավորված Ազգերի Կազմակերպությանը կվերադարձնի նրա նշանակությունը, և այդ ճանապարհով ՄԱԿ-ի գործունեությունը կերաշխավորի բոլոր ժողովուրդների անվտանգությունը։

Այդ խնդիրը կատարելու համար մենք անհրաժեշտ համարեցինք դիմել ոչ միայն հինգ մեծ տերությունների կառավարություններին, այլև մյուս բոլոր կառավարություններին։ Մատնանշելով նրանց պատասխանատվությունը իրենց ժողովուրդների առջև և նրանց պարտքը մարդկության հանդեպ, մենք նրանց առաջարկում ենք պաշտպանել մեր գործողությունները։ Եթե կառավարությունները խաղաղության գործին այնպիսի աջակցություն ցույց տային, որպիսին նրանք անհրաժեշտ են համարում ցույց տալ պատերազմի նախապատրաստությանը, ապա դա շատ ավելի արժեքավոր կլիներ։

Սակայն իրենց բախտի համար պատասխանատվությունը առաջին հերթին կրում են իրենք՝ ժողովուրդները։ Եթե մեր ժամանակակիցները ցանկանում են խուսափել ապագա սերունդների նզովքից, նրանք պետք է բավականաչափ ուժեղ լինեն, որպեսզի փոխեն իրադարձությունների ընթացքը, և պատերազմի նախապատրաստման խելահեղությանը հակադրեն բանակցությունների խելացի ուղիները, որ նշել է Խաղաղության պաշտպանության Ժողովուրդների կոնգրեսը։ Տղամարդիկ ու կանայք, համակված իրենց պատասխանատվությամբ, որտեղ էլ նրանք գտնվեն, հասարակության ինչ խավերի էլ պատկանեն, ինչպիսի կազմակերպություններում էլ աշխատեն, պետք է միավորեն իրենց ջանքերը, որպեսզի կառավարություններին ստիպեն պատասխանելու Ժողովուրդների կոնգրեսի դիմումին։

Հինգ մեծ տերությունների միջև Խաղաղության Պակտը կարող է վճռական ազդեցություն գործել մարդկության բախտի վրա և կարող է դառնալ այն անխորտակ պարիսպը, որի հովանու տակ կաճեն ամբողջ աշխարհի երեխաները։

